

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միեր Շահգեղյանի, Հեղինե Բիշարյանի, Իշխան Խաչատրյանի, Կարեն Բոթոյանի և Հովհաննես Մարգարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-081-11.09.2012-ՏՀ-010/0, Պ-081<sup>1</sup>-11.09.2012-ՏՀ-010/0, Պ-081<sup>2</sup>-11.09.2012-ՏՀ-010/0 և Պ-081<sup>3</sup>-11.09.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

«Վենչուրային հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է միջազգային փորձի

հիման վրա մշակված «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով արդեն իսկ կարգավորվում են ներդրումային ֆոնդերի, մասնավորապես, որակավորված ներդրողների ֆոնդերի, այդ թվում՝ վենչուրային ֆոնդերի ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերությունները: Օրենքի համաձայն որակավորված ներդրողների ֆոնդ է համարվում ստանդարտ կամ մասնագիտացված ֆոնդը, որի թողարկած բաժնետոմսերը կարող են առաջարկվել միայն որակավորված ներդրողներին և (կամ) այն ներդրողներին, որոնցից յուրաքանչյուրի կողմից ձեռք բերվող բաժնետոմսի գնման գինը գերազանցում է 20 մլն դրամը:

2. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդը (այդ թվում՝ վենչուրային ֆոնդը) համարվում է որակավորված ներդրողների ֆոնդ: Մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդը կարող է հանդես գալ վենչուրային ֆոնդի տեսքով, եթե ֆոնդի կանոնների կամ կանոնադրության համաձայն ֆոնդի ակտիվների առավագն 50 տոկոսը պետք է ներդրվի նոր ստեղծված կամ զարգացման վաղ փուլում գտնվող կազմակերպությունների թողարկած կարգավորվող շուկաներում առևտրին չթույլատրված արժեթղթերում այդ կազմակերպությունների աճի, զարգացման կամ դրանց թողարկած արժեթղթերը կարգավորվող շուկայում թույլատրելու նպատակով:

### 3. Նախագծի համաձայն՝

1) «Վենչուրային հիմնադրամի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը նվազագույնը սահմանվում է 500 000 000 դրամ», մինչդեռ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ վենչուրային ֆոնդի) կանոնադրական կապիտալի նվազագույն մեծություն չի սահմանվել: Այսպիսով, ներկայումս առավել արտոնյալ պայմաններ են ստեղծված վենչուրային ֆոնդերի ձևավորման համար, քան նախատեսված է ներկայացված օրենքի նախագծով.

2) «Վենչուրային հիմնադրամի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը կարող է համալրվել բացառապես դրամական միջոցներով» պահանջն ընդունելի չէ, քանի որ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վենչուրային ֆոնդերի համար նման սահմանափակում նախատեսված չէ, և ֆոնդի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել նաև այլ միջոցներով.

3) «Վենչուրային հիմնադրամի կողմից գուտ շահույթը մասնակիցներին բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին վենչուրային հիմնադրամի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին վենչուրային հիմնադրամում առկա չբաշխած շահույթի գումարին»: Հասկանալի չէ, թե ինչպես կարող է որևէ կազմակերպություն ունենալ գուտ շահույթ, եթե նրա վնասները գերազանցում են շահույթի գումարը:

4. Նախագծի 6-րդ հոդվածով սահմանվել է վենչուրային հիմնադրամների «կառավարչի» գործունեության վերաբերյալ դրույթ, մինչդեռ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արդեն իսկ կարգավորված են վենչուրային ֆոնդի կառավարչի գործունեությանն առնչվող հարաբերությունները: Օրենքի համաձայն ֆոնդի կառավարիչը ֆոնդի կառավարման լիցենզիա ստացած անձն է, և կառավարիչը պարտավոր է ձևավորել տնօրենների խորհուրդ: Կառավարչի կազմած որակավորված ներդրողների ֆոնդի հաշվետվությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ միայն վերջինիս պահանջով, և պարտադիր հրապարակման պահանջը դրանց վրա չի տարածվում:

#### 5. Բացի դրանից, նախագծի՝

1) 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում հղում է կատարվել «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածին, մինչդեռ նշված օրենքն ուժը կորցրած է ճանաչվել 2009 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության 2008

թվականի հունիսի 10-ի ՀՕ-111-Ն օրենքով.

2) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վենչուրային ֆոնդը կարող է ստեղծվել ցանկացած առևտրային իրավաբանական անձի ձևով՝ բացառությամբ բաց բաժնետիրական ընկերությունների, մինչդեռ այս դրույթն արդեն իսկ կարգավորված է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

3) 10-րդ հոդվածի համաձայն վենչուրային հիմնադրամների ստեղծման իրավասությունը վերապահվում է բացառապես Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին, մինչդեռ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ֆոնդ ստեղծելու նման սահմանափակումներ չի նախատեսում: Մինչև ժամանակ, նախագծի 4-րդ հոդվածը պարունակում է վենչուրային հիմնադրամների կողմից փայերի տեղաբաշխման եղանակի ու մասնակիցների քանակի վերաբերյալ մի շարք սահմանափակումներ, մինչդեռ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նման սահմանափակումներ չի պարունակում:

2. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

Օրենքի նախագծով առաջարկվում է վենչուրային հիմնադրամների կանոնադրական կապիտալում, ինչպես նաև վենչուրային հիմնադրամների կողմից այլ անձանց կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության ձեռքբերման և իրացման արժեքների դրական տարբերությունը շահութահարկով հարկման ենթակա եկամուտ չհամարել, ինչպես նաև վենչուրային ձեռնարկության համախառն եկամուտը նվազեցնել վենչուրային ներդրման չափով:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ՝

1. Ներկայացված արտոնությունների մի մասն արդեն իսկ սահմանված է «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Մասնավորապես, «Շահութա-

հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով շահույթահարկի գումարը ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ վենչուրային ֆոնդերի) համար հաշվարկվում է գուտ ակտիվների նկատմամբ 0.01 տոկոս դրույքաչափով:

2. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ներդրումային ֆոնդի ակտիվներից կարող են գանձվել միայն այն վճարները (այդ թվում՝ կառավարչի և պահառուի պարգևավճարները, ֆոնդի հարկերը), որոնք սահմանված են օրենքով և որոնք չեն կարող գերազանցել ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) սահմանված առավելագույն սահմանաչափերը: Մինևույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել սույն հոդվածի վերոնշյալ վճարների առավելագույն սահմանաչափեր, որոնք տարբերակվում են կախված ֆոնդի տեսակից:

3. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծով ներկայացված արտոնությունների կիրառման վերաբերյալ հայտնում ենք, որ առաջարկվող արտոնությունները չեն համապատասխանում «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտոնությունների բնույթին և ուղղություններին:

Ավելացված արժեքի հարկից ազատման գործող արտոնություններն առավելապես սոցիալական ուղղվածություն ունեն: Դրանց նպատակն առավել առաջնային սոցիալական նշանակության որոշ ապրանքներ և ծառայություններ սպառողների համար առավել մատչելի դարձնելն է:

4. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը նպատա-

կահարմար չէ, քանի որ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արդեն իսկ սահմանված է ներդրումային ֆոնդերի, մասնավորապես, որակավորված ներդրողների ֆոնդերի (այդ թվում՝ վենչուրային ֆոնդերի) ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն անսպասելի կահարմար է համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Կարինե Մինասյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վենչուրային հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է կարգավորել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության և համայնքների կողմից վենչուրային հիմնադրամների ստեղծման, գործունեության, վենչուրային հիմնադրամներում ներդրումներ կատարելու, ինչպես նաև վենչուրային հիմնադրամների կողմից առևտրային կազմակերպություններում ներդրումների կատարման հետ կապված հարաբերությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է վենչուրային հիմնադրամների կանոնադրական կապիտալում, ինչպես նաև վենչուրային հիմնադրամների կողմից այլ անձանց կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության ձեռք բերման և իրացման արժեքների դրական տարբերությունը շահութահարկով հարկման ենթակա եկամուտ չհամարել, ինչպես նաև վենչուրային ձեռնարկության համախառն եկամուտը նվազեցնել վենչուրային ներդրման չափով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեի հարկային եկամուտները կարող են նվազել:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման առավել կոնկրետ եզրակացություն հնարավոր է տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13 արձանագրային որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ բաժնի 14-րդ գլխով նախատեսված ձևաչափով փաստաթղթերի ներկայացման պարագայում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է ավելացված արժեքի հարկով հարկման օբեկտ չհամարել դրամական վճարման, սեփական կապիտալի գործիքով հատուցման դիմաց կամ շահույթի բաշխման համաձայնագրի հիման վրա գյուտի և (կամ) օգտակար մոդելի արտոնագրի կամ դրանց օգտագործման իրավունքի զիջումը, փոխանցումը, իրացումը կամ ցանկացած այլ ձևով օտարումը վենչուրային ձեռնարկությանը, ինչպես նաև ավելացված արժեքի հարկից ազատել վենչուրային կառավարչի ծառայությունների մատուցումը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման դեպքում պետական բյուջեի հարկային եկամուտները կարող են նվազել:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման առավել կոնկրետ եզրակացություն հնարավոր է տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13 արձանագրային որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ բաժնի 14-րդ գլխով նախատեսված ձևաչափով փաստաթղթերի ներկայացման պարագայում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է կարգավորել «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ուժի մեջ մտնելուց հետո ստեղծված առևտրային իրավաբանական անձանց ֆիրմային անվանման մեջ «հիմնադրամ» բառի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:



**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում**

«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**<<Վենչուրային հիմնադրամների մասին>>, <<Շահութահարկի մասին>>  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>,  
<<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում  
լրացումներ կատարելու մասին>>, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում  
կարգավորման**

1. <<Վենչուրային հիմնադրամների մասին>>, <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Նախագծերի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և  
«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և  
«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի  
Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական  
ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության  
գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված  
կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, «Շահութահարկի մասին», «Ավելացված  
արժեքի հարկի մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքներում լրացում կատարելու  
մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին  
ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, «Շահութահարկի մասին»,  
«Ավելացված արժեքի հարկի մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքներում լրացում  
կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և  
ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով  
իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում,  
դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի  
նախատեսվում:

Նախագիծը վերաբերում է ՀՀ տարածքում մասնավոր ներդրումային հիմնադրամների  
ստեղծման, կառավարման, դրանց գործունեության կանոնակարգման իրավական հիմքերին,  
որոնք արդեն իսկ սահմանված են ներկայումս գործող «Ներդրումային ֆոնդերի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքով, որով կարգավորվում են ներդրումային ֆոնդերի  
ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ առաջարկվող Նախագիծն անհարկի  
կավելացնի ներդրումային հիմնադրամների ոլորտում արդեն իսկ գործող իրավական  
կարգավորումը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) կարգավորվում է ՀՀ տարածքում վենչուրային հիմնադրամների ստեղծման, կառավարման, դրանց գործունեության կանոնակարգման հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

**<<Վենչուրային հիմնադրամների մասին>>, <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

<<Վենչուրային հիմնադրամների մասին>>, <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>, <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Հիմնադրամների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

Պ-081-11.09.2012-SՀ-010/0

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

### **ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

#### **Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում վենչուրային հիմնադրամների ստեղծման, կառավարման, դրանց գործունեության կանոնակարգման, ինչպես նաև վենչուրային ներդրումների հետ կապված իրավահարաբերությունները:

#### **Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական ու իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության եւ համայնքների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում վենչուրային հիմնադրամների ստեղծման, գործունեության, վենչուրային հիմնադրամներում ներդրումներ կատարելու, ինչպես նաև վենչուրային հիմնադրամների կողմից առևտրային կազմակերպություններում իրականացվող ներդրումների վրա:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են այդ պայմանագրերի նորմերը:

#### **Հոդված 3. Օրենքում օգտագործվող հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) Վենչուրային (մասնավոր ներդրումային) հիմնադրամ՝ մասնավոր ներդրումային հիմնադրամ, որը սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է վենչուրային ներդրում,

2) Վենչուրային ներդրում՝ վենչուրային հիմնադրամի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում կատարվող ներդրում, ինչպես նաև վենչուրային հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում նոր ստեղծվող կամ գործող վենչուրային ձեռնարկության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում կամ այլ առևտրային իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում կամ այլ ձեռով կատարվող ներդրում:

3) Վենչուրային կառավարիչ (կառավարիչ)՝ առևտրային իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը պայմանագրի հիման վրա իրականացնում է վենչուրային հիմնադրամի գործադիր մարմնի լիազորությունները, ինչպես նաև վենչուրային հիմնադրամի անունից կառավարում է վենչուրային ներդրումները: Տնտեսական ընկերակցություն հանդիսացող վենչուրային հիմնադրամներում որպես կառավարիչ հանդես է (են) գալիս լիակատար ընկերը (ընկերները):

4) Վենչուրային ձեռնարկություն՝ առևտրային իրավաբանական անձ, որը սահմանված կարգով ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից գրանցված գյուտը եւ/կամ օգտակար մոդելն օգտագործում է «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան եւ հանդիսանում է այդ գյուտի եւ/կամ օգտակար մոդելի արտոնագրատեր կամ օգտագործման լիցենզիայի իրավասու տիրապետող անձ:

2. Սույն օրենքով սահմանված հասկացությունները այլ օրենքերում կիրառվում են սույն օրենքով սահմանված նշանակությամբ, եթե այդ օրենքներում այլ նշանակություն սահմանված չէ:

3. Սույն օրենքի իմաստով վենչուրային հիմնադրամ չի համարվում բանկը, ապահովագրական ընկերությունը, ինվեստիցիոն հիմնադրամը, կենսաթոշակային հիմնադրամը, վարկային կազմակերպությունը եւ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձը:

#### **Հոդված 4. Վենչուրային հիմնադրամները**

1. Վենչուրային հիմնադրամը կարող է ստեղծվել ցանկացած առեւտրային իրավաբանական անձի ձեւով, բացառությամբ բաց բաժնետիրական ընկերությունների:
2. Վենչուրային հիմնադրամների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման եւ դրանց լուծարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են համապատասխան ձեւի իրավաբանական անձանց ստեղծումը, գործունեությունը, վերակազմակերպումն ու լուծարումը կարգավորող օրենքներով եւ այլ իրավական ակտերով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:
3. Վենչուրային հիմնադրամը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 մասնակից (բաժնետերեր, փայտերեր, լիակատար ընկերներ, ավանդատուներ եւ այլն):  
Եթե վենչուրային հիմնադրամի մասնակիցների թիվը 49-ից ավելի է դարձել, ապա վենչուրային հիմնադրամը մեկ տարվա ընթացքում պետք է համապատասխանաբար կրճատի իր մասնակիցների քանակը կամ լուծարվի:
4. Արգելվում է վենչուրային հիմնադրամի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը համալրել կամ այլ ձեւով միջոցներ ներգրավել հրապարակային առաջարկի միջոցով:
5. Վենչուրային հիմնադրամի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը կարող է համալրվել բացառապես դրամական միջոցներով:
6. Վենչուրային հիմնադրամի, ինչպես նաեւ վենչուրային հիմնադրամների ներդրումների կառավարումը պարտադիր կարգով պետք է իրականացվի կառավարիչի կողմից:
7. Վենչուրային հիմնադրամն իրավունք ունի իրականացնել բացառապես վենչուրային ներդրումներ: Վենչուրային հիմնադրամն իրավունք չունի իրականացնել արտադրական, առեւտրային, ապահովագրական, բանկային եւ այլ գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:
8. Վենչուրային հիմնադրամը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո երեք ամսվա ընթացքում իր մասնակիցներին տրամադրել տեղեկություններ վենչուրային հիմնադրամի ֆինանսական վիճակի եւ կատարված ներդրումների մասին: Վենչուրային հիմնադրամի կանոնադրությամբ կարող է նախատեսվել տեղեկատվության տրամադրման այլ ավելի կարճ ժամանակահատված:

**Հոդված 5. «Վենչուրային հիմնադրամ» բառակապակցության օգտագործումը**

Վենչուրային հիմնադրամները կարող են իրենց ֆիրմային անվանման մեջ օգտագործել «վենչուրային հիմնադրամ» կամ «մասնավոր վենչուրային հիմնադրամ» բառակապակցությունը: «Վենչուրային հիմնադրամ» կամ «մասնավոր վենչուրային հիմնադրամ» բառակապակցությունն իրենց անվանման մեջ իրավունք ունեն օգտագործել միայն այն իրավաբանական անձինք, որոնց գործունեությունը համապատասխանում է սույն օրենքով սահմանված պահանջներին:

**Հոդված 6. Վենչուրային կառավարիչը**

1. Վենչուրային կառավարիչ կարող է լինել ցանկացած առեւտրային իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:
2. Տնտեսական ընկերակցության ձեւով ստեղծված վենչուրային հիմնադրամում գործերի վարման (ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեությամբ ձբաղվելու) կարգը սահմանվում է տվյալ ընկերակցության կանոնադրությամբ:
3. Վենչուրային հիմնադրամի եւ կառավարչի միջեւ կնքվող պայմանագիրը պարտադիր պետք է պարունակի դրույթներ կառավարչի վարձատրության, նրա կողմից վենչուրային հիմնադրամի մասնակիցներին հաշվետվություններ ներկայացնելու կարգի եւ ժամկետների, պայմանագիրը միակողմանիորեն լուծելու դեպքերի եւ կարգի, ինչպես նաեւ միակողմանիորեն պայմանագրի լուծման դեպքում փոխհատուցումների մասին:
4. Կառավարիչն իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի ելնելով վենչուրային հիմնադրամի շահերից, իրականացնի իր իրավունքները եւ կատարի իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

Կառավարիչը պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետեւանքով վենչուրային հիմնադրամին պատճառված վնասի համար:

Կառավարիչն ազատվում է սույն կետով նախատեսված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ, ներդրումային հայտարարագրին համապատասխան, չգիտեր եւ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետեւանքով վենչուրային հիմնադրամը կկրի վնասներ:

5. Կառավարիչը պարտավոր է պայմանգրի կնքման պահից երկամսյա ժամկետում վենչուրային հիմնադրամի հաստատմանը ներկայացնել ներդրումային հայտարարագիր, որը պետք է ներառի վենչուրային հիմնադրամի ներդրումային քաղաքականությունը եւ ուղղությունները, ներդրման պայմա ններն ու կարգը (այդ թվում՝ ներդրումն երի կազմի եւ կառուցվածքի սահմանափակումները) , ինչպես նաեւ ներդրման հետ կապված հնարավոր ռիսկերի նկարագիրը :

Վենչուրային հիմնադրամի կողմից հաստատված ներդրումային հայտարարագրում փոփոխությունները կարող են կատարվել փոխադարձ համաձայնությամբ:

6. Կառավարիչն իրավունք չունի վենչուրային հիմնադրամի անունից ներդրումներ կատարել մինչեւ ներդրումային հայտարարագրի հաստատումը:

7. Կառավարիչը կարող է վենչուրային հիմնադրամի չտեղաբաշխված միջոցները տեղաբաշխել բացառապես ներդրումային հայտարարագրով նախատեսված ֆինանսական գործիքներում:

#### **Հոդված 7. Վենչուրային հիմնադրամի մասնակիցները**

1. Վենչուրային հիմնադրամի մասնակից կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական ու իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունները, Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքները:

2. Վենչուրային հիմնադրամի մասնակիցներն օգտվում են այն իրավունքներից եւ կրում են այն պարտականությունները որոնք բխում են տվյալ վենչուրային հիմնադրամի կազմակերպա-իրավական կարգավիճակից, եթե սույն օրենքով այլ բան սահմանված չէ:

#### **Հոդված 8. Վենչուրային հիմնադրամի կանոնադրական կապիտալը**

1. Վենչուրային հիմնադրամի կանոնադրական (բաժնեհավաք)\_կապիտալի նվազագույն չափը սահմանվում է 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

3. Վենչուրային հիմնադրամի կողմից զուտ շահույթը (կուտակված շահույթ) մասնակիցներին բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին վենչուրային հիմնադրամի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին վենչուրային հիմնադրամում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին:

#### **Հոդված 9. Վենչուրային հիմնադրամների միություններ**

Վենչուրային հիմնադրամներն իրենց գործունեությունը համակարգելու, շահերը ներկայացնելու եւ պաշտպանելու, տեղեկություններ փոխանակելու եւ այլ խնդիրներ համատեղ լուծելու նպատակով կարող են ստեղծել վենչուրային հիմնադրամների միություններ եւ անդամակցել դրանց:

#### **Հոդված 10. Վենչուրային հիմնադրամների հիմնադրամ**

Հայաստանի Հանրապետությունը եւ համայնքները կարող են ստեղծել վենչուրային հիմնադրամների հիմնադրամ կամ հանդես գալ որպես նրանց մասնակից:

Վենչուրային հիմնադրամների հիմնադրամն պետության կամ համայնքի պարտադիր մասնակցությամբ առետրային իրավաբանական անձ է, որը ստեղծվում է բացառապես վենչուրային հիմնադրամներում ներդրումներ կատարելու եւ վենչուրային հիմնադրամների եւ /կամ/ վենչուրային ներդրումները երաշխավորելու նպատակով:

Հիմնադրամների հիմնադրամները պարտավոր են իրենց ֆիրմային անվանման մեջ օգտագործել «Վենչուրային հիմնադրամների հիմնադրամ» բառակապակցությանը:

«Վենչուրային հիմնադրամների հիմնադրամ» բառակապակցությունը իրենց անվանման մեջ

իրավունք ունեն օգտագործել միայն սույն հոդվածի դրույթներին համապատասխանող իրավաբանական անձինք:

**Հոդված 11. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-081<sup>1</sup>-11.09.2012-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվականի, ՀՕ-155, այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝

«Սույն օրենքի իմաստով եկամուտ չի համարվում վենչուրային հիմնադրամների կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում, ինչպես նաև վենչուրային հիմնադրամների կողմից այլ անձանց կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում ունեցած մասնակցության ձեռքբերման եւ իրացման արժեքների դրական տարբերությունը»:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31<sup>1</sup> -րդ հոդվածով՝

«Հոդված 31<sup>1</sup> Հարկման նպատակով վենչուրային ձեռնարկության համախառն եկամտի նվազեցումը

Հարկման նպատակով վենչուրային ձեռնարկության համախառն եկամուտը նվազեցվում է վենչուրային ներդրման չափով:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-081<sup>2</sup>-11.09.2012-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 մայիսի 1997 թվական ՀՕ-118, այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ կետով՝

«14) դրամական վճարման, սեփական կապիտալի գործիքով հատուցման դիմաց կամ շահույթի բաշխման համաձայնագրի հիման վրա գյուտի եւ (կամ) օգտակար մոդելի արտոնագրի կամ դրանց օգտագործման իրավունքի զիջումը, փոխանցումը, իրացումը կամ ցանկացած այլ ձեռով օտարումը վենչուրային ձեռնարկությանը:»:

**Հոդված 2.** Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ կետով՝

«29) վենչուրային կառավարչի ծառայությունները:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-081<sup>3</sup>-11.09.2012-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (26 դեկտեմբերի 2002 թվականի, ՀՕ-516) 40-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝

«5. Սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ստեղծված այն առետրային իրավաբանական անձանց վրա, որոնց ֆիրմային անվանման մեջ «հիմնադրամ» բառի օգտագործումը նախատեսված է այլ օրենքներով:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Վենչուրային հիմնադրամների մասին», «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ  
կատարելու մասին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ  
կատարելու մասին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ՀՀ  
օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

«Վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում վենչուրային հիմնադրամների ստեղծման, կառավարման, դրանց գործունեության կանոնակարգման, ինչպես նաեւ վենչուրային հիմնադրամների հետ կապված իրավահարաբերությունների կարգավորումն է: Օրենքի նախագիծը սահմանում է ՀՀ ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, ՀՀ եւ համայնքների կողմից վենչուրային հիմնադրամների ստեղծման, գործունեության, վենչուրային հիմնադրամներում ներդրումներ կատարելու, ինչպես նաեւ վենչուրային հիմնադրամների կողմից առետրային կազմակերպություններում իրականացվող ներդրումների հետ կապված իրավական կարգավորման հարցերը: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Վենչուրային հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ: